

Մ Ռ Ա Յ Լ Օ Ր Ե Ր

Երկաթուղու կայարանում ահագին ամբոխ էր խմբուած։ Թէ՛ն ամեն տեղ տիրում էր կենդանութիւն, լսում էր խօսակցութիւն, ծիծաղ, բայց՝ վրդովուած, կասկածոտ հայեացքներից, գունատ՝ կարծես մահճակալից նոր վերկացած՝ հիւանդոտ դէմքերից երևում էր, որ մի ինչ-որ գաղտնի շփոթութիւն է տիրել այդ մարդկանցը, մի ինչ որ ջղային ալիք է տարածուել և աներևոյթ թելերով փաթաթել նրանց։ Թեթեւ շարժում, փոքր աղմուկ և նրանք պատրաստ էին գլխակոր փախչել։ Այդ տեսակ արտայայտութիւն երևի թէ՛ լինում է նրանց մօտ, որոնք մտնում են գազանների որջը...

Գնացքը դանդաղ շարժուեց...

Այստեղ էլ նոյն բազմատեսակ հասարակութիւնը։

Ասեղ եթէ վայր ընկնէր, գետին չէր հասնի...

Մի կերպ, դժուարութեամբ՝ տեղ բռնեցի։

—Մայրիկ, եկէ՛ք այս կողմը, ձեզ համար աւելի յարմար կը լինի,—ասում էր քնքշաբար ինձ մօտ կանգնած մի սևազգեստ գեղեցկուհի՝ վայելչակազմ, նուրբ։

—Ինձ համար ամենայարմարը միայն գերեզմանն է,— հանդարտ, ցածր ձայնով պատասխանեց մի հասակաւոր կին՝ սև, խոր սգի հագուստում։

Անկարելի է մոռանալ նրա դէմքը, որի վրայ վիշտն և կսկիծը դրել էին իրանց կնիքը։ Նա լուռ նայում էր շուրջը. կարծես ոչինչ չէր հասկանում. հայեացքը ուղղում էր դէպի ամենքը մի ինչ որ հարցով, որը ինքը չէր կարող լուծել...

Ինձ համար պարզ էր, որ այս կնոջ կեանքում կատարուել էր մի աղիտալի իրողութիւն։ Իմ ենթադրութիւնը սխալ չէր...

—Ձեր մայրն է,—դիմեցի հարցով գեղանի տիկնոջը, որի աչքերում փայլում էին արտասուների կաթիլներ։

—Ո՛չ,—պատասխանեց նա ուռաերէն,—մի՛թէ չգիտէ՞ք՝ ո՞վ է նա... Ողորմելի՛ կին... Փեսան, աղջիկը՝ երկու երեխաներով

զոհ գնացին այդ սարսափելի ողբերգութեան ժամանակ: Ամբողջ ընտանիքը այրուեց... Օ'հ, մարդու մազեր են կանգնում... Երևակայացէ՛ք... մայրը և աղջիկը ապրում էին քաղաքի դանազան ծայրերում: Երբ կոտորածը սկսուեց, նրանց միացնում էր միայն հեռախօսը, միակ կապը, հաղորդակցութիւնը նրանց մէջ: Նա անդադար հանգստացնում էր մօրը, որ ամուսինը հերոսաբար ընդդիմադրութիւն է ցոյց տալիս. իսկ... յետոյ... երբ կատաղած ամբոխը կրակ տուեց տունը, կտրուեց այդ վերջին թելն էլ: Վերջին խօսքերը, որ մայրը լսում է աղջկայ բերանից, սրանք էին. «կրակը կպել է, հազիւ թէ փրկուենք... դուռը... սե դեբը են, հրացանները ուղղած... կը թագնուենք մառանում, աշխատեցէ՛ք շուտով օգնութիւն հասցնել... դուցէ...» Յանկարծ ձայնը կտրուում է:

Գլուխը կորցրած մայրը՝ խելագարութեան հասած՝ դուրս է թռչում: Յետ են բերում: Յետոյ—լնչպէս և առաջ—հեռախօսով դիմում են օգնութեան... օգնութիւն աղերսում... Եւ խոստանում են և մերժում... Հետեանք: Երկու օրից յետոյ, երբ ալեկոծուած ամբոխը սթափուում է այդ ծանր մղձաւանջից, այրուած տան մոխրի միջից դուրս են բերում ածխացած դիակներ, որոնց ճանաչելը անհնարին է լինում: Այդ կիւնը զրկուած է վերջին մխիթարութիւնից, չգիտէ որտեղ են թաղուած իր սիրելիների ոսկորները... Լնչ դաժանելի օրեր էին, անխժուած օրեր... գլխաւորը՝ անմիտ, տրամաբանութեան օրէնքներին հակասող...

Լուսամուտի մօտ կանգնած, մենք կիսաձայն խօսում էինք, փոխանակում մեր մտքերը...

—Ասում են, դուք, հայերդ էք մեղաւոր,—խառնուեց խօսակցութեանը մի ռուսուհի,—մի լնչ որ աւազակապետի որդու սպանելով, առիթ էք տուել...

—Որ աւազակները՝ իրանց գազանային հակուսիների մէջ ազատ թողնուին...—կծու կտրեց նրա խօսքը մի նիհար և ջղային շիկահեր ռուս, յայտնի ֆիրմայի կառավարիչ,—այն ժամանակ Կովկասը միշտ արեան ասպարէզ կը լինի. մեղաւորը տգիտութիւնն է, որի վրայ, որպէս պատրաստ լարերի, հմուտ ձեռքեր են նուազում...

—Տգիտութիւնն է մեղաւոր,—յանդիմանեց ռուսուհին,—ապա լնչ է այն կազմակերպուած սպանութիւնը, որը կատարում է Հեռաւոր Արեւելքում, քաղաքակրթուած ազգերի մէջ...

—Նոյնն է... Նոյն վարակիչ խելագարութիւնը... Նոյն արիւնոտ մէզը, որը մարդկանց աչքերը կուրացնում է...

—Ասացէ՛ք... Դուք տեսել էք, թէ ի՞նչ տեսակ են մորթում մանուկներին... Ես այդ տեսել եմ... սը՛ս... սը՛ս... կը լսեն... այն երեխան էլ կը կենդանանայ և... կը տեսնէ... իհարկէ կտեսնէ, թէ ի՞նչպէս են մաշկում իր կաշին, և զինուորը... և զինուորը... այո՛... հա՛... հա՛... հա՛... ծիծաղում էր... սը՛ս... սը՛ս... կը լսեն... պատերն էլ ականջ ունին...

Դժուար է նկարագրել այն տպաւորութիւնը, որ ներգործեցին այդ գունատ, կուչ եկած, պղտորուած աչքերով երիտասարդի տեսքն ու խօսքերը։ Մենք լուռ նայեցինք իրար և մի սոսկալի միտք միաժամանակ անցաւ մեր գլխով։

Նա դողում էր ամբողջ մարմնով, գլուխը ցած ձգում, կարծես խուսափելու ինչ որ հարուածից... Աչքերը անսահման սարսափ էին արտայայտում։

Գեղեցկուհու դէմքը այլայլուեց, նա մեքենայաբար բռնեց ձեռքերս։

—Այդ ի՞նչ է... մի՛թէ այդ ևս կայ... խեղճ... խեղճ... շնչում էր նա։

Ռուս կառավարչի մռայլ և կարեկից աչքերը հակասում էին ուսուցչու սառը, անտարբեր դէմքին...

—Դու էլ ինձ նման գլուխդ ծեծում ես... մազերդ քանդում,—ասում էր սղաւոր կնոջ մի ուրիշը՝ գլուխը կապած վրացնակ, համեստ, համարեա աղքատ հագնուած։
—Տուն ունէի, տեղ ունէի, քարուքանդ արին, մարդու սպանեցին... քարը գլխները... ջահէլ տղաս աչքիս առաջ վէր գցեցին... եղած չեղածս թալանեցին... խանութ ունէինք, գլուխներս պահում էինք... Թողեցին ձեռներս խաչ արած, հինգ որբերով... քեզ մատաղ, ես ի՞նչ անեմ, մեր գնամ... դարդիս դարման արէք... Երեխայքս հաւաքել եմ մօրըս մօտ, բայց նա էլ եղոտ չէ... ի՞նչ անեմ... մնում է հաւաքեմ տանեմ, ծովում թաղեմ իմ վիշտըս... իմ ցաւը...

—Ո՞վ է դա, ի՞նչ է պատմում,—հարցնում էին մեր շուրջը, նկատելով թէ ի՞նչ ցաւակցութեամբ էինք լսում նրա պատմութիւնը։

Վրագ, կցկտուր թարգմանեցինք։

—Ա՛հ, Տէր Աստուած, ի՞նչ արհաւիրք է, բացականչում էր Փրանսուհին, մի փոքրիկ, քնքոյշ արարած՝ կարմիր գլխարկով և վերարկուով։ Ի՞նչ բարբարոս երկիր... Դուք վայրենի էք, Հասան,—շրջեց նա երեսը դէպի մի գեղեցիկ՝ բայց վաւաչոտ դէմքով պարսիկի,—դուք վայրենի էք, և ես այլ ևս այստեղ չեմ մնալու...

Պարսիկը դատապարտեալի նման գլուխը խոնարհեց։

—Դու ինձանից երջանիկ ես, ընկճուած ձայնով շարունակեց սգաւոր կիներ, դու երջանիկ ես... քեզ մնացել են հինգ երեխայ... իսկ ինձ... ամբողջ տունս փչացաւ. մնաց միայն ահա...

Նա կրծքից հանեց մի սպիտակ բան, զգուշութեամբ բաց արաւ... Դա մի սպիտակ, նուրբ քաթանից թաշկինակ էր, տառանշանով:

—Ահա սա,—ցոյց տուաւ նա, ապա երկու ձեռքերով մօտեցրեց երեսին ու ամուր սեղմեց... Արտասուք չկար. աչքերը չոր էին. միայն ներքին վրդովմունքից աղաւաղուել էին նրա դէմքի գծագրութիւնները. լսում էր միայն, թէ ինչպէս կրճատում էին ատամները:

Տիրեց ծանր, խեղդող լուրթիւն...

Մեռելային գունատութիւն պատեց բոլորի դէմքերը:

—Դու էլ որդի չունիս,—մեղաւորի պէս շշնջաց գլուխը կապած կիներ:

—Լեզուդ չորանայ, ի՞նչ ես ասում... Թշնամուն էլ այդ խօսքը չեն ասիլ... Աղջկաս տունը քանդուեց ջնջուեց... բայց որդի ունիւմ... նրա արեւի՛ն մատաղ... աֆիցեր է... այն տեղ է, պատերազմում... նրան էլ խեցին... տաւան ինձնից... դեռ առաջ: Մուկղէն է... նամակ ստացայ... գրում է. «հանգիստ կանց, կուլը շուտով կը վերջանայ»... Չգիտեմ, ճշմարիտ է,—հարց տուաւ նա: Դա հարց չէր, այլ աղերսանք՝ որ իր յոյսը չխորտակեն...

—Այո՛, այո՛, անկասկած,—արագօրէն պատասխանեց գեղեցիկ տիկինը, շոյեւով՝ դժբաղդ կնոջ կնճիռներով ծածկուած ձեռները,—հանգիստ կացէք, դա ճշմարիտ է. ես այդ գիտեմ մօտ աղբիւրից: Ահա այս պարոնը—ուրա է. նա հէնց այդ էր պատմում... այնպէս չէ՛,—դիմեց նա իմ վկայութեանը, արտասուքը կուլ տալով:

—Օ՛հ, անտարակոյս,—ստիպեցի ինձ ստել:

—Մօրաքոյր, շուտով կը հասնենք, քեզ քաջ պահիր... խեղճ քեռին մնաց միայնակ, հիւանդ... մօտեցաւ միջին հասակով մի մարդ և կանգնեց սգաւոր կնոջ մօտ:

—Նրանից թանկագինը կորցրի...

—Անշուշտ, բայց ի՞նչ օգուտ որ... էհ. ինչ ուզում ես արա,—աւելացրեց նա՝ յուսահատ շարժում գործելով, յետոյ դարձաւ դէպի մեզ.—ժամերով գերեզմանատանն է մնում. անհնարին է լինում հեռացնել...

—Ա՛հ, Տէր իմ, ինչ սոսկալի է այս ամենը,—շարժում էր իր փոքրիկ գլուխը ֆրանսուհին:

—Ես ձեզ եմ հարցնում,—նորից խօսեց տենդային ձայնով դունատ երիտասարդը,—դուք տեսել էք... մի մարդու կէսը այրւում էր... աչքերը ցցուել էին ակնակապիճներից... յանկարծ դեերը մօտեցան... նորից նաւթ ածեցին գլխին և կրակ տուին... հուրը պլպլացաւ։

—Օհ, լռեցէք... մի շարունակէք...—աղաղակում էին բոլորը։

—Սըս... սըս... լսեցի՞ք տրաքոցը... նորից մարդ սպանեցին... նա թրպրտում է՝ գլուխը կտրած հաւի նման...

—Ոչինչ չկայ, հանգիստ կացէք... դա երկաթուղու սուրճն է...

Սարսուռ էր անցնում մարդու մարմնով. սարսափը թափանցում էր մինչև ոսկորների ծուծը...

—Իսկ ձեր քրոջը չե՞ն առևանգել... դուք այդ չէ՞ք տեսել... ձեր ձեռքերը չե՞ն կապել, որ դուք նայէք...

—Սա ուղղակի դժոխք է... անկարելի է այդպէս շարունակել,—բացադանշում էր ուռաը։

Ես պատրաստ էի երկաթուղու պատուհանից ընկնել ցածը, միայն թէ չլսէի, ոչինչ չլսէի... Գնացքը դանդաղ սողաց, ճռնչեցին շղթաները, ապա կանգ առաւ։

—Հեռագիր... նոր հեռագիր... տխուր լուրեր... մեկամաղձոտ կանչում էր ծախողը։

—Ի՞նչ է պատահել... ի՞նչ կայ... վեր թռանք բոլորը։

Ժողովուրդը դուրս էր թափւում, դէպի կայարանը։

Յանկարծ՝ ամբողջ պատռելով մտաւ ընկերս և կայծակի արագութեամբ սկսեց պատմել։

—Նորութիւն... ճապոնացիք վերցրել են Մուկդէնը... ուսաց զօրքը նահանջում է... ահագին կոտորած...

Ոչ մի կերպ հնարաւորութիւն չկար նրա խօսքերի հոսանքը կանգնեցնել։ Հետևապէս՝ մեր ամբողջ ուշադրութիւնը լարեցինք սգաւոր կնոջ վրայ։ Առաջին վայրկեան նա կարծես չհասկացաւ, շարունակ նայում էր մեր երեսին՝ փրկութիւն էր սպասում. յետոյ արձակեց մի անբնական ճիչ, բռնեց գլուխը և սկսեց բղաւել՝ ուղղակի կենդանու ձայնով։

—Օհ... վերցրին ասում էք... որդիս էլ սպանեցին... նրան էլ գիւլլախորով արին... ի՞նչու համար... ասացէք... ի՞նչ մեղք ունեմ... Աստուած... ճիտեղ ես դու... դա է քո արդարութիւնը... բալմս... բալմս...

Ապա ուշքից գնաց։

Անկարելի է նկարագրել ընդհանուր շփոթութիւնը։

Երիտասարդ կինը՝ երեսը շրջած դէպի պատը՝ բարձրա-

ձայն հեկեկում էր, գլուխը բռնած: Ֆրանսուզին ծունկ չոքած կեղտոտ յատակի վրայ՝, փայփայում, համբուրում էր ուշագնաց կնոջ ձեռքերը: Ռուսը մնացել էր քարացած բռն, յուզվածքից: Պարսիկը դուրս թռաւ ջրի յետեից... Գլուխը կապած կինը ծեծում էր ծնկները, կրծոտում շրթունքները:

—Սև՛ր քո օրին... վա՛յ քեզ, վա՛յ, ա՛ կնիկ... Էդ ի՞նչ չար խաբար էր, որ քեզ բերին... ողբում էր նա՝ ենթադրութիւնը եղելութիւն դարձնելով:

Պարսիկը վերադարձաւ, ջուր բերելով, և աւելացրեց.

—Օրիորդ ժան, կառքը պատրաստ է, երթանք...

—Ո՛չ, ո՛չ... դնա՛... յետոյ, յետոյ... աղաղակեց ֆրանսուզին բարկացած:

Պարսիկը անյայտացաւ...

—Ես այլևս չեմ մնալու այս բարբարոս երկրումը,—կըրկնում էր փոքրիկ արարածը:

—Ի՞նչ է պատահել... Ի՞նչ աղմուկ է այստեղ:

Դռան միջուկում երևաց ոստիկանի հանդիսաւոր դէմքը:

Նրան բացատրեցին, որ այդ կինը յուզուել է ստացած լուրից:

—Աստ, միայն իրա որդին չէ... շատե՛րը զոհ գնացին... չպէտք է վրդուիլ հասարակական խաղաղութիւնը... մարդիկ...

Կինը երեսը շրջեց և հազիւ իրան զսպելով՝ կծու արտասանեց.

—Բայց այս կինը՝ մի տառը օր սրանից առաջ, կրակի մէջ է թաղել մի ամբողջ ընտանիք... դուք այդ դիտէ՛ք... կարող էք հասկանալ...

—Ա՛ն... բայց հասարակական հանդուտութիւնը... Պարոնայք, վռաղեցէ՛ք... յետոյ կառք չէք գտնելու, պատասխանեց ոստիկանը սառը և հրամայողական ձևով և անհետացաւ...

—Ա՛հ, դէ՛ւք, հաստակաշիններ, որպէս ողբ դուրս թռաւ գեղեցիկուհու բերանից, որը յուսահատութիւնից և վշտից պատերն էր զարկում իր քնքոյշ ձեռները:

—Ես տեսնո՞յ... դաշոյնը խրեցին յդի կնոջ որովայնը... արիւնը ցայտեց... Նրեխան դեռ չծնուած, ենթադրուեց զարհուրելի տանջանքի... դեռ չծնուած... Դուք տեսնո՞ւմ էք, իմ մազերը սպիտակել են... Դուք այդպէս արիւն խմել կարող էք... խուլ ձայնով հարցրեց մի պատանի:

—Լռեցէ՛ք... բաւական է... լռեցէ՛ք...

—Սը՛ս... սը՛ս... հանդարտ... Էլի կը գան... Նրբ նա կենդանի այրւում էր... մազեր պար էին գալիս... իսկ մարդիկը՝ գազանի նման ոռնում էին... հմ... հմ... հմ...

—Ձեզ մատաղ... համ աչք հանեցի... աչքիս լոյսը կանաչեց, մինչև մեծացրի... վերջին յոյսս նա էր... բաւմա... բաւմա... տուէր ինձ—հաղիւ հազ շնչում էր թուլացած կինը, ծամածուկով դէմքը՝ կարծես մուրալով մեզանից իր գաւազը։

Ժողովուրդը հաւաքւում էր։ Տիրում էր շփոթութիւն։ Գրեթէ գրկելով տարաբաղդ կնոջը, հասցրինք մինչև կառք։

Ես նոյնպէս շտապեցի վերադառնալ տուն, շփոթուած, գլխիկոր։

Հազարաւոր մտքեր անցնում էին գլխովս, իրար հրհրում, իրար խառնւում՝ կարծես կատաղի պար լինէին պարում։ Ես մտածում էի այն բիւրաւոր չարիքների վրայ, որոնք այսպէս արագ և անընդհատ թափւում էին իմ չարատանջ ազգի գլխին...

Անցան մի քանի կառքեր։ Երեկոյեան աղջամուղջի մէջ փայլեցին Փլանսոնու կարմիր վերարկուն և պարսկի խոշոր աչքերը... Իսկ յետոյ... չգիտեմ... Տեսնում էի այրուող տներ, սարսափահար դէմքեր... խելագար աչքեր... վարդազոյն օդի մէջ՝ արիւնահոս վէրքեր։ Լսում էի վայրենի ծիծաղ... աղաղակ... հրացանի տրաքոց... ես հոտառում էի մարդկային այրուող մսի գարշահոտութիւնը... Եւ սարսուռը, սարսափը, ցանը, որպէս օձ՝ պտտւում էին շուրջս, սեղմում կուրծքս, կոկորդոս։ սարսուռը, սարսափը ցաւը՝ այն գազանի համար, որը դեռ մոնչում է, աւանդ, մարդու մէջ...

Տիկ. Եկ. Բահաթուր